Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1494

1999

43770-Ch. h.

ՆԱՄԱԿՆԵՐ

ՓՈՓՐ ՀԻՆԵՐԻՒ

ՎԻՐԱՑ

ԻՐ ՄՕՐԱՔՈՅՐԻՑ։

ԼԷՕ
ՄՐԱԳԱՐԱՆ

ԳԱՐԳԻՆ ԵՊԷԽԱՆՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՆԴԼԻԵՐԵՆԻՑ

ՅՈԳՀԱՆՆԷՍ ԱԽՎԷՐԴԵԱՆ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿ-ԱԿԱԴ.ՍՍՀ
ԳՐԱԽՈՍԱՆԻ ՄԱՍՆ.

1629.
28272-62

Ի ՏՓԽԻՍ

Ի Տպարանի Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Հայոց Ընծայելոյ Մասնաւորական Գեղարդայ Ամրոցեանցս։

—1861—

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ 15-го Ноября 1857 года.

Цензоръ И. Кайтмазовъ.

1494-60

38 1496

ՆԱՄԱԿՆԵՐ

ՓՈՔՐ ՀԷՆՐԻԻ ՎՐԱՑ։

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՑ։

Թէպէտ քեզանից ես շատ հեռու եմ կենում ու շատ ժամանակ է, ինչ որ քեզ չեմ տեսել, բայց էլի ես քեզ շատ սիրում եմ ու քեզ վրայ շատ եմ մտածում։ Այս քեզ էն ժամանակը սիրեցի, երբ որ առաջին անգամ տեսայ։ Էն ժամանակը դու շատ փոքր երեխայ էիր և նստած էիր քոյ մօր գոքումը։ Մարդ ճանաչելու համար դու շատ փոքր էիր, քոյ բարեբար մօրն էլ չէիր ճանաչում։

նա քեզ պաչ էր անում ու էր սիրելի
փոքրիկ Հինրի էր կանչում։ Յետոյ ես
քեզ նրա ձեռքից առա։ դու աչքերդ
բաց էիր անում, երեսիս նայում և խնդ-
դում էիր։ Հա, ես քեզ էն ժամանակը
սիրեցի ու աղօթք էի անում իմ սրտի
մէջ, որ Աստուած օրհնէ քեզ և դու
լինես նրա սիրելի երեխայ։ Աստուրից յե-
տոյ ես քեզ էլ չեմ տեսել, մինչև քոյ
երկու տարեկան դառնալը։ էն ժամա-
նակը դու կարողանում էիր վազել և խա-
ղալ ու մէկ փոքր էլ խօսում էիր։ էն
ժամանակ դու ուրախ և երջանիկ էիր
երևում, բայց քոյ ամէն բարեկամները
շատ տխուր էին։ Դու սևեր ունէիր հա-
գած, բայց չէիր իմանում թէ ինչու հա-
մար, և դու զարմանում կ՝ լինէիր, թէ
ինչու ամէնքս տխուր էինք։ քո բարերար

մայրը մեռել էր, տարած էր մուկն ի հան-
գըստարան և թաղած էր խոր գերեզման-
նի մէջ։ Մենք գիտէինք, որ դու նրան
էլ չես տեսնել. էս էր պատճառը, որ
մենք էնպէս շատ տրտմած էինք։ Բայց
դու չէիր կարողանում հասկանալ մեզ-
նից, երբ որ քեզ ասում էինք, թէ քոյ
մայրը մեռել է։ Դու շատ անգամ հարցը-
նում էիր մեզանից, թէ ի՞նչու է գնացել
նա և ե՞րբ յետ կ'դառնայ։ Դու չէիր իմա-
նում թէ նա երբէք էլ չի գալ։ Իմիկ
քոյ սիրելի հայրն էլ մեռած է. դու էն
ցաւագին օրը կարո՞ղ ես միտդ բերել,
երբ որ դու նրան տեսնում էիր նեղ դա-
գաղի մէջը և պաչ էիր անում նրա սա-
ռը թշերը։ Նա քեզ չէր նայում, ոչ
էլ կարողանում էր խօսել, էնդուր, որ
նրա հոգին էնտեղ չէր. դու միայն նրա

մարմինն էլը տեսնում։ բայց նրա մարմինը առանց հոգի քեզ չէր կարողացել տեսնել, ոչ քեզ հետ խոսել և ոչ սիրել քեզ։ Մարմինը մեռնում է և դրվում է նեղ դագաղի մեջ, բայց հոգին Աստուածն առնում է և էնդու համար չէ մեռնում։

Դու հիմիկ իմ սիրելի երեխայ, դու ես փոքր անօգնական որբ։ Որբը նա է, ում հայրը և մայրը մեռած են։ որբ լինելը շատ տխրալի է։ Ինչպէս կարող է փոքր երեխայն լրան վրայ հոգս անել, կամ կերակուր դանել ուտելու, կամ շոր հագնելու, կամ տուն լրան պահպանելու համար անձրևից և ցրտից։ Թէ որ որբը չունենար բարեբար բարեկամները, որք հոգս անէին նրա վրայ, երբ որ նրա ծնողքը մեռած են, նա շատ կը-

մեռնէր պակասութենից։ Բայց Աստուած տուել է քեզ բարեբաղ բարեկամներ, որք յոյս ունին, որ դու կ'մեծանաս և բարի ու հնազանդ երեխայ կ'դառնաս։ Բայց մէկ բարեկամ էլ կայ, որն որ նրանցից աւելի մեծ է և զօրեղ։ Այս բարեկամը կ'պահպանէ քեզ քոյ ողջ կեանքի մէջ։ Նա միշտ պատրաստ կ'լինի օգնել քեզ, որ դու բարի լինես։ Նա չի թողնել, որ քեզ մէ վնաս պատահի։ Նա կ'սիրէ քեզ էնդուվրայ աւելի, ինչքան հայրդ և մայրդ կարող էին սիրել քեզ։ Էս ամենը նա կ'անէ, թէ որ դու նրանից կ'խնդրես։ Էս բարեկամը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, որն որ ստեղծեց ամեն բանը երկնքումը և երկրումը։ Ո՛հ, աղօթք արա նրան և խնդրէ նրանից, որ քոյ բարեկամ լինի։ Էն ժա-

մանակը դու միշտ առողջ և բաղդաւոր կ'լինիս։ Քոյ ուրիշ բարեկամները կաւրսղ են մեռնիլ, ինչպէս էլ քոյ սիրելի հայրը և մայրը։ բայց Յիսուսը երբէք չի մեռնիլ, որովհետև նա Աստուծոյ որդին է։ Նա միշտ քեզ հետ կ'լինի և երբէք քեզ չի թողնել, թէ որ կ'խնդրես, որ նա լինի քոյ բարեկամ։

Որովհետև քեզ սիրում եմ և ցանկանում եմ, որ դու բաղդաւոր լինիս, գրում եմ ես քեզ Յիսուսի վրայ։ Աստածիր էնդու վրայ, ինչ որ խօսեցայ քեզ հետ և դու էն ժամանակը աւելի լաւ կը-կարողանաս հասկանալ, ինչ որ ես կ'գրեմ իմ միւս նամակումը։

Քեզ սիրող հօրաքոյր։

ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ։

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԵՐԵԽԱՅ։

Այս նամակը քեզ կ'հասնի քոյ ծնունդի օրը, երբ որ դու ութ տարեկան կ'լինիս։ Ընդհատ տարի դու եօթ տարեկան էիր, և էկող տարի, թէ որ կը ապրիս, ինն տարեկան կ'դառնաս։ Ուրեմն դու տեսնում ես, որ ինչ ժամանակ քոյ ծնունդի օրը գալիս է, մի տարով դու մեծանում ես։

Ամեն տարի, քանի դու մեծանաս, էնքան դու աւելի լաւ և խելօքներից կ'լինիս։ Դու դիտես, որ էս քոյ ութ տարվան կեանքի մէջ դու շատ բան ես սովորել։ դու մինակ խօսել և վազել չ'ես սովորել, բայց Աստուծուն աղօթքը անելն էլ առաւօտները և երեկոյները և անգիր էլ

շատ տարբեր և տանուտերներ տվեր ել
ես։ բացի սրանցից տվեր ել ես դու կա-
պելով կարդալ և գրել։ և երբ որ դու
մի քիչ տեսել կ'մեծանաս, էլի շատ բա-
ներ կ'տվերես։

Բայց մեկ բան կայ, որ դու պէտք է
տվերես, որն որ ուրիշ բաներից տեսել
է հարկաւոր։ էնդու համար, որ առանց
նրան ոչինչ բարի գործ չես կարող ա-
նել։ Կարող ես դու դուշակել ինչ եմ
ուզում ասել։ Հա, ես կարծում եմ,
որ դու պէտք է տվերես սիրել Աստուած
և պահպանել նրա պատուիրանքները։ էս
է ճանապարհը բարի և բաղդաւոր լինե-
լու համար։ Ինչպէս կարող ես դու
տվերել Աստուծոյ պատուիրանքները և
ոչ կ'օգնէ քեզ, որ դու բարի լինես։
Աստուա համար կայ սուրբ գիրը, որն որ

նալն չէիր, որ էն ժամանակ նա էթող լը մեծ կարողութիւնը և վառքը աշխարք դալու և մարդկերանց հետ կենալու համար, և էն էլ ոչ թէ հարուստներու և մեծատուններու, այլ խոնարհներու և աղքատներու հետ։ Այս կ'ասեմ քեզ լինչու համար մեր Փրկիչը երկնքիցը էկաւ մարդկերանց հետ բնակվելու և վերջապէս խաչի վրայ մեռնելու համար։

Դուն կարդացել ես քոյ Աստուածաշունչումը, որ երբ Աստուած ստեղծեց Ադամին և Եւային, բնակեցրուց նրանց մէկ դեղեցիկ այգու մէջ, ուր նրանք շատ բաղդաւոր էին, մինչև որ սատանէն կը գար և նրանց կ'մեղանչել տար։ Նրանք էն ժամանակը մեղք արին, երբ որ կերան ծառի պտուղը, որն որ այգու մէջ դուս էր եկել և որն որ Աստուած Ադա-

մին արդեւել էր ուտելու։ Երբ որ Ադամ
և Եւայն մեղք արին, նրանք էլ բաղ-
տաւոր էին։ Ստուած նրանց վրայ բար-
կացաւ և այդքան դուրս արաւ և չէր
համբերել, որ նրանք էլի հնազանդ կենա-
յին, և հատու պատճառաւ նրանց մեծ
մեղքի համար նրանց հոգիները պէտք է
գնային դժոխքը, էն զարհուրելի տեղը,
որն որ պատրաստած է սատանի և նրա
չար հրեշտակներու համար, որտեղ որ
նրանք յաւիտեան ողորմելի վիճակի մէջ
պէտք է լինէին։ Բայց Յիսուսը նրանց
խղճալով, ուզեց կրել էն չարչարանք-
ները, որոց որ նրանք արժանացան։ Նա
կամեցաւ նրանց համար մեռնել, որ նրանք
դժոխքից ազատվին։ Իմի դու տեսնում
ես պատճառը Ի՞նչու համար նա էթող
երկնային աթոռը և էկաւ խաչի վրայ

մեռնելու։ Եւ էր նրա մեծ սէրը խեղճ մեղաւորներու համար, որ նա կարողա-նար ազատել նրանց հոգիները դժոխքից։

Ադամ և Եւայն մեռած են և թաղած շատ հարիւր տարի առաջ։ և մի թէ նրանցից յետոյ ոչ ոք չէ արել մեղ-աշխարքիս վրայ մեայն նրանք էին մեղա-ւորները։ Այ, դու ի՞նչպէս, որ հիմի շատ մարդիք կան, որք մեղք են անում։ և կա-րելի է, որ դու կարծես շատ փոքր երե-խանց վրայ, որոց դու ճանաչում ես, որ ուշադրութիւն չեն անում սուտխօ-սելիս, կամ վատ խօսքեր դարձնելիս։

Բայց հիմիկ ես չեմ ուզում, որ դու մտածես քոյ ընկերներու վրայ։ Մի թէ նրանց մէջը ոչ ոք չկայ, որ քեզ շատ մօտիկ լինի, և ոչն որ երբեմն չքաշ վա-խենում մեղք անել։ Կոդկիդ դիր էս նա-

ՀԱՅԿ-ԱԶԳ. ՄՐՇ. ԳԱՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

282272-62 1629

մակը մէկ լոպէ և մտածիր թէ նա ով պէտք է լինի։ Ա՛հ, փոքր Հէնրի, մի՞թէ քոյ սիրտը ոչինչ բան չէ ասում, թէ դու մեղաւոր ես և թէ դու շատ անգամ արել ես վատ բան և արժանի ես, որ Աստուած քեզ վրայ բարկանայ։ Այս մի տխրալի ճշմարտութիւն է։ Բայց Յիսուսը մեռաւ, որ ազատէ մեղաւորներին և նմանապէս փոքր երեխայն, ինչպէս դու։ Ուրեմն թէ դու ցաւում ես քոյ մեղքերու համար, Աստուած թողութիւն կ'տայ քեզ՝ իր որդու սիրու համար։

Դու ունես չար սիրտ, որն որ սիրում է մեղք անել։ և չարութիւնը շատ անդամ միտք ունի, որ մանի քոյ սրտի մէջ և խաբէ քեզ, որ դու վատ բան անես։ Յիսուսը կ'փոխէ էտ չար սիրտը, թէ որ նրան կ'ընդունես։ Նա կ'ուզարկէ իր սուրբ

հաղին, որ նորոգէ քոյ սիրտը, որն որ նը-
ման կ'սիրէ և բարի Հանապարհի վրայ
կ'կանգնի, և նա կ'ջնջէ քոյ ամեն մեղ-
քերը և քոյ անուանը կ'գրէ կեանքի գրի
մէջ։

Ո՛հ, ընտրէ նրան քոյ բարեկամ և
Փրկիչ, որ դու յաւիտեան բաղձաւոր
լինիս։

Բէջ ոչրոպ Հրատարակ։

ՆԱՄԱԿ ՀՈՐԲՈՐԴ։

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԵՐԵԽԱՅ։

Այս մօտիկ ժամանակը, երբ որ քոյ հօր եղբայրը էկաւ ինձ տեսնելու, քեզ վրայ մէկ բան պատմեց, ոն որ ինձ շատ ուրախացրուց։ Դա ինձ տաւ, որ դու միշտ ճշմարիտ ես խօսում։ Ա՛հ, ինչպէս ուրախացայ, որ էս՝ իմ փոքր Հէնրիի վրայ լսեցի։ Փառք տուր Աստուծուն, սիրելի երեխայ, ոն որ քեզ պահպանեց մեծ մեղքից։ և խնդրէ նրան, որ քեզ իր ողորմութիւնը տայ, որ դու կարողանաս միշտ սիրել և խօսել ճշմարտութիւն։

Այս ճանաչում էի էն երեխանցն, որք սուտ կ՚խօսէին, ծածկելով սխալմունքները, և շատ անգամ չէին նկատվում։ Բայց Աստուած լսում է էաը ստախօսու-

թիւնը և դրում է իր դրքի մէջը՝ վերջի դատաստանի օրվան համար։ ոչինչ չէ կարող նրան ջնջել էն դրքիցը, բացի Քրիստոսի արիւնիցը։

Երբեմն Աստուած պատժում է ստախօսին խիստ, երբ որ սուտ է խօսում։ Լաչէս մէկ անգամ պատահեց մէկ մարդուն և նրա կնոջն, որք երկուսնեվեթ յանկարծակի մեռան ստախօսութեան համար։ Նրանց անունն էր Անանիա և Սաֆիրայ։ Թէ որ դու նրանց վրայ չես կարդացել, նայիր քոյ Աստուածաշնչումը։ Էնտեղ, Գործք Առաքելոցի հինգերորդ գլխումը կ՚տեսնես նրանց տրխուլի պատմութիւնը։ Թէ որ էս դլուխը կարդացել ես, անցկացիր էլի, որ դու կարողանաս և աւելի ատել ստախօսութիւնը և վախենաս նրանից։

Ա՛չ որ չէ հաւատում սատխասին, եբբ որ Ճշմարիտ էլէ խօսում։ Մէկ փոքրը երեխայ Յդուարդ անուանալ էս օրինակի էր։ Յդուարդը եբբէ-ք չէր խոստովանվում իր պատմնքումը, թէ որ վատ բան էր անում. խոստովանվելու և աշխատելու տեղ, որ միւսանդամ լաւ բան անէ, նա սուտ էր խօսում և ուրանում էր. վերջապէս բանը էնտեղ հասաւ, որ նրան էլ ո՛չ ով չէր հաւատում ոչ մի բան. և էստու համար նա շատ անդամ պատժվում էր, եբբ որ արժանի էլ չէր։

Սրահումը պատուհանի վրայ դրած էր մի դոնդ ապակի ջրով լիքը. երեք դեղեցիկ ոսկէ ձուկ նրա մէջ լող էին տալիս. և Յդուարդը շատ սիրում էր ապակի վրայ բարձրանալ և մատիկ տալ

նրանց լաղ տալուն, բայց չէր համար-
ձակվում նրանց ձեռք տալն։ Էնդուր,
որ թէ ջրից հանէր, ձկները կ'մեռնէին։

Մէկ օր մայրը Յդուարդին էթող
տանը և ինքն դուրս գնաց։ Մուս առա-
ւօտը վաղ, երբ որ նրա մայրը էկաւ տես-
նելու իր ձկները, ամանի մէջ միայն եր-
կու ձուկ էր մնացել։ Մէկը էլ չ'կար։ Ո՞չ
ով էր գիտի, ուր գէտք է լինէր։ Բայց
տան մէջ տմենքը կասկածում էին, թէ
Յդուարդի հանածը պէտքէ լինի, որովհե-
տեւ շատ անդամ լսել էին, որ նա ցան-
կանում էր իր ձեռքն ունենալ։ Ծա-
ռանեն միմեանց ասում էին, թէ նա
իրաւ կ'ուրանայ։ և նա էնպէս էլ արաւ։
Թէպէտ շատ էլ լաց էլաւ, բայց ո՞չ ով
չհաւատաց նրան։ Իրան սենեակումն էր
գցած առանց գրքի և խաղալու բանի և

պատժած էր - թէպէտ Յդու

ինձ համար ուրախալի է, ես քեզ ու-
զարկում եմ մին փոքր պարգև և էս ին-
դունէ ինչպէս իմ սիրոյ և հաճութեան
նշան։ Ընկրկ մէջը կայ մեծ Բրիտանի-
այի (Ինդլիա, Շոտլանդիա և Իռլանդիա)
աշխարհացոյցը, փոքր տախտակի կտոր-
տանքներու վրայ կպցրած։ Դու դիտես,
որ էն աշխարհքի անունը, որ տեղ որ
կենում ես, Մեծ Բրիտանիայ է։ Ես
կարծում եմ, որ քեզ ախորժ կը լինի
փոքր կտորտանքները մեասին մեաւորել,
երբ՝ որ ամեռուան դիշերները քոյ մօրա-
քեռ կարի սեղանի մօտ նստած կը լինիս։
Էսպիսի եղանակով դու կը սովորես զա-
նազան նահանգներու դրութիւնն և երբ
Սուրբի նահանգը իր տեղ դնես չը մո-
ռանաս մոտածել նրա վրայ։

Ռեզ ա՛ռող մօրատոյր։

ՆԱՄԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԵՐԵԽԱՅ։

Ինչ որ իմ առաջվանն համահնչուն քեզ մօտ գրեցի, կարծում եմ, դու գիտես, որ իմ գլխաւոր ցանկութիւնն էնէ, որ դու կարողանաս սիրել մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին և լինել Աստուծոյ երեխայ։ Եւ ինչու եմ ես ուրիշ բաներից էս առելի կամենում։ Այնդուր, որ միայն սա է քեզ համար Հանապարհ, որ դու բարի և բաղտաւոր լինես։ դու չես կարող լինել բաղտաւոր, թէ որ չես լինել բարի։ և բայի Աստուած ոչ ոք չէ կարող քեզ բարի անել։

Ինչով կարող ենք մենք իմանալ, թէ երեխայն սիրում է կամ չէ սիրում իր Փրկիչ Յիսուս Քրիստոսին։ Մենք կարող

ենք լմանալ նրա գործքերով։ Երեխայն, որն որ սիրում է Յիսուսին, աշխատում է, որ նրան դուրը գայ ամեն իր արարմունքներումը։ Այս գիտէ, որ Փրկիչը նրան կարող է տեսնել ամեն ժամանակ։ Նմանապէս գիտէ, որ Յիսուսը ատում է մեղքերը և շատ կ'բարկանայ, թէ որ երեխայն էնպէս բաներ անէ, որք կարողեն նեղել նրա բարեբար բարեկամին։ Ուրեմն, երբ որ երեխայն խաղում է, նա պէտք է աշխատէ, որ վատ խօսքեր չ'դուրծածէ, ոչ վարվի իրան ընկերներու հետ անմարդի և անքաղաքավարի։ Էնդուր, որ էսպէս բաներ անելը վատ է։ ոչ պէտք է կռվի և ոչ վատ անուններ տայ։ Եւ 'ի հարկէ երեխայն, քանի որ սիրում է խոնարհութիւն, թէ որ իր գործողութենով պատճառում է մարդուն բար-

կանալ, մեծ մեղք է անում և շատ նե-
ղութիւն է տալիս Սուրբ Յիսուսին։ Ու-
բեմն այսուհետև փոքր երեխայն կ'աշ-
խատէ ասել և անել էն, ինչ որ ճշմա-
րիտ է, կ'լսէ և հնազանդ կ'լինի իր ծը-
նողացը, կամ բարեկամներուն, որք Ա-
ստուծեմէն ստուած են նրանց ծնողաց տեղ,
կ'լինի շնորհակալ և երախտագէտ նրանց,
որք նրա համար բարերարութենով հոգս
են առել և վերջապէս կ'աշխատէ, որ
նրանց տայ բաւականութիւն, կ'ցանկա-
նայ, որ ամէն մարդու համար բարերար
լինի։ կ'տայ ողորմութիւն աղքատներուն
և կ'օգնէ նրանց, ինչքան որ կարող է։ և
կ'լինի խղճող և հոգս անող, որ չտայ
փոքր կենդանիներուն ոչինչ նեղութիւն։
եթէ տեսնէ խեղճ քաղցած շուն, չպէտ-
քէ ընկնի նրա էանէն ծեծելու, բայց

լինդ ի տանը մի կ բան, որ նրան տայ ու-
տելու։ կամ տեսնի ծիտ, որ թռչում
լինի ճանապարհի վրայ, չպետքի հաւաքի
քարերը, որ նրա վրայ գցի, այլ կանդնի
հանդիստ և դիտողութիւն անի, ինդուր
որ նա զգում է անբաւականութիւն, երբ
որ նրան նեղութիւն են տալի։ կամ թէ
թիթեռն խաղ լինի անում օդի վրայ,
նա չպետքի ցանկանայ նրա գեղեցիկ թե-
ւերը գՀլաեել։ կամ թէ ճիճու ման լինի
գալի հողի վրայ, իր ոտի տակը չպետքի
ճնշի։ Երեխայն, ոն որ իր փրկչին սի-
րում է, երբեք աեողորմ չի լինում։

Ուրիշ շատ բաներ էլի կան, որոշ
որ մենք կարող ենք ասել, թէ երեխայն
սիրում է իր Փրկչին և աշխատում է նը-
րան հնազանդ լինելու։ Իստուր երե խայն
անում է իր զուարճութիւնը աղօթքներով,

երբ որ գնում է Աստուծոյ տունն և կար-
գում է Աստուածաշունչ և ուրիշ սուրբ
գրքեր, որք Աստուծոյ սուրբ խօսքերն
են։ Բայց անհոգ և չար երեխայն չի մը-
տածել երբէք էապէսի բաներուի վրայ. Թէ
որ ունի Աստուածաշունչ, կամ ուրիշ
գրքեր երբեմն կարելի է ընկած լինին
գետնի վրայ և թերթերն կեղտոտած,
կամ դուրս թափած. Թէ որ գնում է
եկեղեցի անհոգիստ է լինում, կամ նե-
զացնում է ուրիշին նայելով նրա վրայ,
կամ խօսում է իր կշտին նստածի հետ.
աղօթք անելու և էնպէս քնելու տեղ,
չար երեխայն առանց աղօթք անելու է
պառկում գիշերները և առաւօտները
զարթնելից յետոյ էլ աղօթք չէ անում.
Մի՞թէ զարմանալի չէ քեզ համար լը-
սելը, որ էնպիսի երեխաները էլ կան,

ոչք համարձակվում են քուն մտնելու առանց Աստուծեմն իրանց մեղքերի համար թողութիւն և գիշերը խաղաղութենով անցկացնելը խնդրելու։

Զարմանալի բան չէ եթէ հոգեպիսի երեխայն կռիւ լինի տալի իր ընկերներու հետ և խփում լինի նրանց, ասում ըլի վատ խօսքեր, հնազանդ չըլի լինում իր ծնողացը։ Մէկ խօսքով զարմանալի բան չէ, որ էն երեխաները, ոչք Աստուծեմն չեն վախենում, վատ վարք ունենան։ Ո՛հ, ինչպէս տխրալի է հոգեպիսի տարաբաղտ երեխայի դրութիւնը։ Ինչպէս սկսաբէ խոշնանք նրանց և տոչթ անենք, որ Աստուած փոխէ նրանց չար սիրտերը, որ նրանք կարողանան յետ դառնալ իրանց վատ ճանապարհից։

Մէկ անգամ կար մէկ բարի և սուրբ

Երեխայ, որն որ չէր գիտում մեղք ոչ մաքով, ոչ խօսքերով և ոչ գործողութեամբ։ Նա սիրում էր Աստուծուն և պահպանում էր նրա օրէնքը և նմանապէս սիրում էր իր երկրային ծնողաց և էր խոնարհ ու բարի։ Նրա բնութիւնը երբէք չէ դուրս եկած վատ խօսք։ Նրա ձեռք երբէք չէ հպել մեղաւոր ոչինչ գողութեան մէջ և նրա ոտը երբէք չէ հպել գրած չարութեան ճանապարհի վրայ։ Ո՞վ էր էս սուրբ Երեխայն։ Ի՞նչ էր նրա անունը և որտեղ էր հենում։ Նա էր մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն, որն որ մարդացաւ, էկաւ փոքր երեխայ և հենում էր իր մօր Մարիամ և հիւսն Յովսէփի հետ, Նազարեթումը, որ Գալիլէայումն է։ Դու կարող ես կարդալ նրա պատմութիւնը քո կատարանումը։ Ո՛հ,

կարդայ միշտ և աղօթք տրա, որ Նա, որն որ մէկ անգամ քոյ սիրու համար փոքր երեխայ դառաւ, օրհնէ և սրբէ քեզ։

Թէզ սիրող հայրդ։

ՆԱՄԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ։

ԻՍ ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐ ՀԷՆՐԻ։

Իմ վերջին նամակումը ես քեզ ցույց տուի թէ ինչովէ զանազանվում էն պիսի երեխայն, որն որ իր փրկչին սիրում է, էն երեխայից, որն որ սիրում է մեղք անելը։ Հիմիկ ես ուզում եմ խօսել ինչ զանազանութիւն կայ էնդուամէջ, երբ որ մարդկային մարմինը մեռնում է և հոգին դնում էս աշխարքիցը կենալու էն աշխարքումը, որն որ յաւիտեան մնալու է։

Դիտէ՞ս դու, որ մենք ամենքս պէտք է մեռնենք։ միայն երեխանները, մարդ իկիքը, կանայքը, պառաւները, ամենքը պէտք է մեռնեն։ Շատերը շատ են ծերանում և շատերը մեռնում են դեռ հասակի չը-

հոտած։ Բայց միայն մարմինն է մեռ-
նում և հոգին, ինչպես ես քեզ ասացի
առաջ, պետք է յարութեան կենայ։

Այս մի էնպիսի լուսավոր և բաղ-
տաւոր աշխարհք, որտեղ որ Յիսուսն
է կենում փառքի մէջ, ոչն որ ոչ աչքն
է տեսած, ոչ ականջն է լսած և ոչ մարդ-
ու մտքով է անցկացել, որ կարողանայ
երևակայել էնպիսի փառքի պայծառու-
թիւնը։ Էնտեղ ամէնի արտասուքը սրբ-
ուած է։ Էնտեղ ոչ կայ մեղք, ոչ մահ,
ոչ տրտմութիւն, ոչ նեղութիւն։ Էն-
տեղ հաղարներ և տասն հաղարներ բաղ-
տաւոր հոգիք միաւորած են նոր երգով։
Երգով, որով գովում են և փառաբա-
նում են Յիսուսին, Աստուծոյ Գառնին,
ոչն որ ընջեց աշխարհքի մեղքերը։ Էն-
տեղ կան հրեշտակներ, որք ածում են

իրանց ոսկէ տաւիղներու վրայ Մովսէսի
և Աստուծոյ Գառնի երգերը, ասելով.
«Մեծ և սքանչելի են քոյ գործքերը,
» Տէր Ամենակարող Աստուած, քոյ դա-
» տաստանը արդար և ճշմարիտ է, Դա-
» սրբերու Թագաւոր»։ Այս բաղտաւոր
տեղը անուանվում է երկինք։ Ես քեզ
չեմ կարող ասել ամեն փառաւոր բա-
ները, ինչ որ նրանց վրայ ասած է. բայց
շատ բան դու կարող ես կարդալ քոյ Աստ-
ուածաշունչումը, որտեղ էլ անուանվում են
ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ, ԵՐԿՆԱՅԻՆ
ՍԻՈՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՂԱՔ։

Այս բաղտաւոր տեղը Ցկատուսը ընդու-
նում է միայն նրանց հոգիները, որք սի-
րում են Նրան, երբ որ նրանց մարմինը
մեռնում է։ Փոքր երեխաները կարող են
դնալ հնտեղ և սովորեն երգել գովա-

թեան և միաբանութեան երդը։ Դու միտդ չունես, որ Յիսուսը ասաց. «Թողէք երեխանցն և մի արգելէք նրանց, որ իմ մօտ գան, որովհետև դրանցպէսներու համար է Երկնային Արքայութիւնը»։ Մաթ. 4ԺԹ. 14։

Բայց վայ, եկեղեցի մէկ սարսափելի տեղ, ուր պէտքէ չար հոգիները գնան, որք չեն սիրում փրկիչն և չեն թողնում իրանց մեղքերը։ Էս յաւիտենական նեղութեան և տարաբաղդութեան տեղն է և նրանք պէտքէ կենան էնտեղ ստատանի և նրա չար հրեշտակներու հետ։ Նրանք, որք չեն նորոգել իրանց սիրտը Աստուծոյ սիրով։ Նրանք, որք արհամարհում են Աստուածաշունչն և ուրիշ սուրբ գրքերը և կոտրում են Աստուծոյ պատուիրանքները։ Նրանք, որք չեն խոստովան-

վում և չեն ցաւում լրանց մեղքերու համար—նրանք պէտք հեռանան Աստուծոյ երեսէն և գնան էն զարհուրելի տեղը որտեղ նրանք չեն կարող խնդրել ողորմութիւն և որտեղից երբէք էլ չեն կարող դուրս գալ։

Իմ փոքր երեխայ, դու տրօթք չես անել, որ պահպանվես էսպիսի տանջանքի տեղից։ Դու չես խնդրել Յիսուսին, քոյ բարեկամին, որ ազատէ քեզ մեղքերից և դժոխքից։ Դու չես խնդրել Նրան, որ ուղարկէ իր Սուրբ Հոգին քոյ սրտի մէջը, որ դու կարողանաս ծառայել Աստուծուն մինչև կենդանի ես և գնաս երկինքը, երբ որ կը մեռնես։

Այս նամակները քեզ էն յոյսով գրեցի, որ մտածես քոյ սիրելի Փրկչին։ Նա քեզ տուի Աստուածաշունչը, որ

դու կարողանաս կարդալ նրա վրայ և սովորես երկնքի ճանապարհը։ Նա բարի Հովիւ է և սիրում է քեզպէս փոքր ոչխարները, որովհետև դու կորած ես պատկանիլ էս բաղտաւոր հօտին, որին Հայրը, իր բարի յաժարութենով, կըտայ Աքքայութիւն։

Գրեց ինքդ Հեղինակը։

ՎԵՐՋ։

8 pis 54